ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/10»

ք. Երևան «21» 05 2018թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՄԱՆՄԱՐ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագրով և N 2 հավելված գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 83750000 (ութսուներեք միլոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<ՄԱՆՄԱՐ>> ՓԲԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Ղ. Փարպեցի 9, տար. 7
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան
գործառնական վարչություն	Հ/Հ 217001025956001
Հ/Հ 900011005122	ՀՎՀՀ 02533144
ՀՎՀՀ 02512868	
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«21» 05 2018թ. կնքված
«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/10 » ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Գնման առարկա է հանդիսանում ատլասները /այսուհետ՝ Ապրանք/

Ապրանքների					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	22111140/3	Ատլասներ-1	Պատկերազարդ ատլաս: Հայաստանի և Արցախի հանրապետություններ	''Մանմար'' ՓԲԸ	Ատլասը իրենից պետք ներկայացնի է ՀՀ և Արցախի բնության, տնտեսության ու պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ 25 թեմատիկ քարտեզ: Քարտեզների մասշտաբը պետք է լինի 1:750000 և 1:600000, ինչը կմեծացնի քարտեզների ընթեռնելիությունը և պատկերված օբյեկտների արտահայտ-ությունը: Ատլասում պետք է օգտագործվի պատկերային պայմանական նշանների մշակված համակարգ, ինչը զգալիորեն կմեծացնի ատլասի մատչելիությունը և ճանաչողական նշանակությունը: Քարտեզներին կից պետք է տրվեն հարուստ տեղեկություններ պարունակող ծավալուն տեքստային մեկնաբանություններ օբյեկտների ու երևույթների վերաբերյալ, ինչը զգալիորեն կմեծացնի ատլասի որպես տեղեկատվական աղբյուրի արժեքը: Ատլասում պետք է լինեն տեսարժան վայրերի, աշխարհագրական օբյեկտների բազմաթիվ նկարներ, որոնք կնպաստեն քարտեզների նյութի ընկալմանը: Ատլասը հնարավորություն պետք է տա ծանոթանալու ոչ միայն ՀՀ-ի, այլև ԱՀ-ի մարզերի բնակավայրերի ցանցին, պատմամշակութային հուշարձաններին ու աշխարհագրական օբյեկտներին: <u>Ատլասի տեխնիկական չափանիշները.</u> Չափսը՝ 400x280 Էջաքանակը՝ 56էջ Տեքստի թուղթը՝ 90 գր, կավճապատ Գույները՝ 4x4 Շապիկը՝ 170գր, կավճապատ, 4x4, լամինացված Կազմելու ձևը՝ մետաղական ամրակներով Տպաքանակ՝ 10000
2	22111140/4	Ատլասներ-2	Աշխարհիուսումնական ատլաս	''Մանմար'' ՓԲԸ	Ատլասի առաջին գլխում պետք է լինեն մանրամասն տեղեկություններ երկրագնդի կառուցվածքի վերաբերյալ, քարտեզագրության հիմնական սկզբունքների մասին տեքստային տեղեկություններ, ներկայացվեն քարտեզն ընթերցելու համար անհրաժեշտ հմտությունները և քարտեզների տեսակներն, քարտեզագրական պրոյեկցիաների սխեմատիկ և բացատրական տեքստեր: Ատլասը պետք է ընդգրկի աշխարհի բնության, բնակչության տարածական կառուցվածքի տարբեր բաղադրիչների տեղաբաշխման օրինաչափություններն արտահայտող համապատասխան թեմատիկ քարտեզներ: Ներկայացվեն առանձին տարածաշրջանների ու պետությունների բնության, կլիմայի, բնակչության, արդյունաբերության ու սպասարկման ոլորտի, ինչպես նաև գյուղատնտեսության առաջատար ճյուղերի զարգացման կենտրոնների տեղաբաշխման թեմատիկ քարտեզներ տեքստային բացատրություններով, դիագրամներով ու

					քարտեզասխեմաներով: Ատլասում ներկայացված շուրջ 300 քարտեզներն ու դիագրամները պետք է արտացոլեն ամբողջ աշխարհի երկրների և տարածաշրջանների ֆիզիկական, քաղաքական առանձնահատկությունները, տնտեսությունը, բնակչությունը: Ատլասում պետք է ներկայացվեն նաև Հայաստանին և Արցախին նվիրված բաժին, ուր տեղ կգտնեն դրանց ֆիզիկական, վարչական, կլիմայական, պատմական հուշարձանների քարտեզներ, դիագրամներ և լուսանկարներ: Ատլասը պետք է ունենա հավելված, որը կպարունակի փաստական տվյալներ աշխարհի պետությունների մայրաքաղաքի, տարածքի, օգտագործվող լեզուների, դրամական միավորի, բնակչության քանակի և տարիքային բաշխման, ծնելիության և մահացության, կրթության, առողջապահությանը և պաշպանությանը ուղղված ծախսերի վերաբերյալ: Ատլասը պետք է ունենա աշխարհագրական անվանումներ այբբենական ցանկ (ինդեքս), որը հնարավորություն կտա կողմնորոշիչների միջոցով գտնել քարտեզների վրա ցանկացած աշխարհագրական օբյեկտ: <u>Ատլասի տեխնիկական չափանիշները.</u> Չափսը՝ 280x250 մմ Էջաքանակը՝ 184 էջ Տեքստի թուղթը՝ 115 գր, կավճապատ Գույները՝ 4x4 Կազմելու ձևը՝ թելակար, սոսնձապատում Շապիկը՝ կոշտ կազմ, 4x4, լամինացված Տպաքանակ՝ 6500

<u>1-2 չափաբաժինների համար.</u>

1. Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:
2. Հատուկ նշագրում՝ Կազմի վրա, տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:
3. Փոխադրումը և բեռնաթափումը՝ Կատարողի կողմից, համաձայն կից բաշխման ցուցակի:
4. Ատլասները երաշխավորված են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ մարտի 31-ի թիվ 330-Ա/2 և դեկտեմբերի 27-ի թիվ 1527-Ա/2 հրամաններով՝ որպես ուսումնական նյութ:
5. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Ն. Հարությունյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____Ա. Հարությունյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հ/հ	Մարզի անվանումը, դպրոցները	Ատլաս-1	Ատլաս-2	Նշումներ
1	**Երևան՝**	1800	1500	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն
2	**Արագածոտն՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	800	500	ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	40	
3	**Արարատ՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	800	400	ՀՀ Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	50	
4	**Արմավիր՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	800	380	ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	50	
5	**Գեղարքունիք՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	800	450	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	0	70	
6	**Լոռի՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	1300	500	ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	100	
7	**Կոտայք՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	800	350	ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	70	
8	**Շիրակ՝** *Միջնակարգ դպրոցներ*	1200	550	ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	0	130	
9	**Սյունիք՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	800	400	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	0	30	
10	**Վայոց Ձոր՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	450	260	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	20	

11	**Տավուշ՝** *Մարզային ենթակայության դպրոցներ*	450	300	ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	50	
12	ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ	0	300	Երևանի թիվ 114 ավագ դպրոց
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10000**	**6500**	

Ծանոթություն.
Ուսումնական նյութերը հանձնել Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների կրթության վարչություններ:
ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ ուսումնական նյութերը հանձնել Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ա. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«21» 05 2018թ. կնքված
«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժին	Գնման առարկայի անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը, հազար դրամ	Ենթակա է գնման 2018թ 3-րդ եռամսյակ /մինչև ս.թ. օգոստոսի 25-ը, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 20-րդ օրացուցային օրը բացառությամբ մատակարարի կողմից ավելի կարճ ժամկետում մատակարարելու համաձայնության դեպքի/		Ընդամենը	
				Քանակը	Գումարը, հազար դրամ	Քանակը	Գումարը, հազար դրամ
22111140/3	Ատլասներ-1	հատ	3,50	10000	35000,0	10000	35000,0
22111140/4	Ատլասներ-2	հատ	7,50	6500	48750,0	6500	48750,0
	ԸՆԴԱՄԵՆԸ						83750.0

Պատվիրատու

_____ Ն. Հարությունյան

Կատարող

_____ Ա. Հարությունյան

Հավելված N 3
«21» 05 2018թ. կնքված
«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/10 » ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ.դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Ենթակա են վճարման 2018թ պետական բյուջեից.				Ընդամենը
			1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	Տարի՝ մինչև դեկտեմբերի 20-ը	
1	22111140/3	Ատլասներ-1			35000,0	35000,0	35000,0
1	22111140/4	Ատլասներ-2			48750,0	48750,0	48750,0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ա. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ